

28. Fifth Sunday after Pentecost—Feast of the Discovery of the Box of the Theotokos

Isaiah 2:5-11; Romans 9:30-10:4; Matthew 13:24-30

28. Ե. ԿԻՐԱԿԻ ՀՈԳԵԳԱԼՈՒՍԷՆ ԵՏՔ

Եսայի 2:5-11; Հռոմայեցիներուն 9:30-10:4; Մատթեոսի 13:24-30

Եսայի 2:5-11

Եւ արդ, ո՛վ տուն Յակոբի, եկէք Տիրոջ լոյսովը քալենք: Որովհետեւ ահա Տէրը լքեց իր ժողովուրդը, Յակոբի տունը, քանի որ անոնք փղշտացիներուն պէս իրենց երկիրը կախարդներով լեցուցին առաջուան նման, եւ օտար ամուսնութիւններով խառնածին զաւակներ ծնան:

Իրենց երկիրը ոսկիով ու արծաթով լեցուեցաւ, թիւ չունին իրենց գանձերը. իրենց երկիրը ձիերով լեցուեցաւ, հաշիւ չունին իրենց ռազմակառքերը:

Երկիրը ձեռագործ գարշելի չաստուածներով լեցուեցաւ. կիերկրպագէն առարկաներու զորս իրենց մատներով շինեցին: Նուաստացաւ մարդ արարածը, ո՞րքան ստորնացաւ մարդը. մի՛ ներեր անոնց, Տէ՛ր:

Արդ, գացէք ժայռերու տակ ծածկուեցէք կամ ապաստանները մտէք, Տիրոջ ահարկու ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն փախչելու համար, երբոր անիկա գայ երկիրը հարուածելու:

Որովհետեւ հիմա Տէրը իր բարձունքէն կը նայի մարդոց խեղճութեան վրայ. բայց այն օրը մարդոց ամբարտաւանութիւնը պիտի խոնարհի եւ միայն Տէրը ի՛նք պիտի բարձրանայ:

Հռոմայեցիներուն 9:30-10:4

Ուրեմն ի՛նչ կ'եզրակացնենք: Հեթանոսները, որոնք Աստուծոյ արդարութեան չէին հետեւեր՝ արդարացան, որովհետեւ Քրիստոսի հաւատացին. մինչդեռ Իսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր՝ մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ: Ատիկա իսկ պատճառ եղաւ որ զորին «գայթակղութեան առիթ հանդիսացող քար»-ին վրայ, այսինքն՝ Քրիստոսի, որուն համար մարգարէութեան մէջ գրուած է.՝

«Ահա եւ Սիոնի մէջ կը դնեմ քար մը՝

որ զլորումի առիթ պիտի ըլլայ, ժայռ մը՝

որ գայթակղութեան առիթ պիտի հանդիսանայ:

Բայց անոր հաւատացողը յուսախաբ պիտի չըլլայ»:

Եղբայրնե՛ր, սրտանց կը մաղթեմ եւ կ'աղօթեմ որ Աստուած փրկէ Իսրայէլացիները, որովհետեւ կրնամ իրենց մասին վկայել, թէ Աստուծոյ հանդէպ նախանձախնդիր են. միայն թէ այս նախանձախնդրութիւնը հիմնուած չէ Աստուծոյ ճշմարիտ ծանօթութեան վրայ: Անոնք չհասկցան, թէ Աստուած ի՛նչ ձեւով կ'ուզէր արդարացնել մարդիկը: Արդարանալու իրենց

հասկցած ձեռին կառչեցան եւ ուստի չընդունեցին Աստուծոյ արդարութեան ուղին: Մինչդէռ Քրիստոսով Օրէնքը իր վախճանին հասած է եւ միայն Քրիստոսի հաւատացողը կ'արդարանայ:

Մատթէոսի 13:24-30

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց ու ըսաւ.

– Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ եւ որով ցանեց ցորենին մէջ ու գնաց: Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որովն ալ երեւցաւ: Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա եկաւ որովն»: Անիկա պատասխանեց. «Ասիկա թշնամի մարդու գործ է»: Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ որովն քաղենք»:

«Ո՛չ,- պատասխանեց տէրը,- որպէսզի չըլլայ թէ որովն քաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէք: Չգեցէք որ երկուքն ալ միասին աճին մինչեւ հունձքի ժամանակը. այն ատեն հնձուորներուն կ'ըսեմ.- Նախ որովն քաղեցէք, խուրձեր կազմեցէք այրելու համար, եւ ապա քաղեցէք ցորենը եւ ամբարեցէք շտեմարաններու մէջ»: